

18369

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

№ 3

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԱՍՏԾՈՒ ԿՐԱԿԸ

ԿՈՎԿԱՍԻ շԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Տպ. Ն. Աղանևան, Պոլից. 7

Թիֆ

ԼԻՍ

891.99

Ա-42

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊԵԿ

Ընկերութեանս հրատարակութիւնները

1. Լ. Ուօլլէս. Բէն Հուր. հ. I թարգմ. անգլ. փ. Վարդանեան — 75
2. Նոյն, հ. II. — 75
3. Շիրվանզադէ, Արախտը — 25
4. Մուրացան. Գէորգ Մարգարտունի, պատմական վէպ 1—20
5. Ժուկովսկի. Քնած արքայադուստրը, պատկերազ. հէքիաթ. փոխադր. Աթ. Խնկոյեան . — 15
6. Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմաճօրներ . . . — 50
7. Նաը-Դոս. Մահը, վէպ. 1—20
8. Ն. Բուրակին. Ստորերկրեայ կրակ. պատկ. — 50
9. Շիրվանզադէ. Երկերի ժողովածու (մամուլի տակ):

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1912

- № 1. Գաբրիէլ Դ'Անունցիօ. Ջիօզնդա. ողբ. 5 ար. Ֆրանս. թարգմ. Ս. Յակոբեան.
- № 2. Իլիա Ճաւաւաճէ. Մուրացկանի պատմաճը. վրաց. թարգմ. Տ. Փիրումեան:
- № 3. Ա. Ահարոնեան. Աստծու կրակը:
- № 4—5. Իւշկէիշ. Թագաւոր. Ֆրանս. թարգմ. Յ. Յովհաննիսեան (մամուլի տակ):

ԻԻՐԱՔԱՆՁԻԻՐ ՀԱՄԱՐԸ 15 Կ.



891.93

Ա-42

13 JUN 2005

19 NOV 2010

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն



Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԱՍՏԾՈՒ ԿՐԱԿԸ

125

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլէկտրասպ. Օր. Ն. Ա.դանեմի, Պոլից. 7

1912


02. 2013

18.369

1 3 JUL 2003

Հանրապետության Կրթության նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



3640-2002

«ԱՍՏԺՈՒ ԿՐԱԿԸ»

Զմրան սկիզբն էր, նախնանքերում մի զոռի օր:

Առաջացից սկսած՝ ձիւնախառն անձրեւը սե հող-
մի պէս թափւում էր անհամրոյր թխպոտ երկնքից,
մերթ սաստկանալով, մերթ նուազելով: Երբեմն ուժգին
հովը ալեկոծում էր թաց մթնոլորտը, թափով շփում էր
աջ ու ձախ ձիւնախառն անձրեւը, վզզում էր բազմա-
թիւ սիւների ու լարերի վրայ, հեկեկում էր կիսաւեր
շէնքերի տակ, ճռուցնում էր վիշկանների տախտակնե-
րը, մի վայրկեան խլացնում էր մեքենաների շոռաչն
ու ճախարակների աղմուկը, ապա անցնում էր, սու-
րում դէպ հեռուն, դէպի լայնարձակ, մերկ հարթու-
թիւնը:

Մըպատ, սե շէնքերի ու վիշկանների պատերից
ջրի բարակ, երկար ձւանքներ, որպէս գալարուն որ-
դեր, սահում էին վար ու խառնում փողոցների մա-
ծուցիկ, զարշահոտ շաղախին: Դրսի ցուրտ խոնաւու-
թիւնը ներս էր խուժում բնակարաններն ու գործա-
րանները, կամ մշուշի բազ կապած՝ թուխ, փողփողուն
շղարշի պէս, դալարում, օրօրում էր մուտքերի ա-
ռաջ, մինչև որ քամու մի նոր հոսանք ցրիւ կը տար
նրան:

Ցեխ ու պղտոր ջուր էր ամեն կողմ, մինչդեռ
վերից՝ երկնքի փոխարէն ծանրացած էր գոլորշու, ծխի,

ծիւն ու անձրեւի մի մուգ զանգւած, որպէս մի հսկա-
յական ու աղտոտ լաթ:

Նաւթահանքերում, սակայն, կեանքն իր սովորա-
կանի պէս էր — խեղճ ու տենդոտ: Ոհագին հնոց-
ներն ինչպէս միշտ գոռում էին, մեծ ու փոքր անթիւ
խողովակներ ընդհատ-ընդհատ որձկում էին թանձր ու
տաք գոլորշին, բարձր ծխնելոյղները անխռով ծուխ ու
մուր էին թքնում երկնքի ճակատին, անիւները դառ-
նում էին վայրագ ու ցասկոտ պտոյտներով ու երկաթը
ինչպէս կատաղած շուն՝ յամառօրէն կրծոտում, չանգ-
ւում էր երկրի կործքը:

Եւ ամեն կողմ՝ աղբ ու մուրի մէջ կորած մի
բազմութիւն, տարտամօրէն խոհուն, աքնում, եռում
էր հնազանդ այն վիթխարի մութ ոյժին, որ անողոր
ու բիրտ՝ մոնչում էր հնոցների, մեքենաների, ճախա-
բակների ժխորի մէջ, թնդում էր երկրի մութ ան-
դունդներում կամ ժայթքում դէպի վեր, որպէս թանձ-
րացած զայրոյթ: Անհրապօր ու հողմածեծ յարկերի
տակ ջրուտ բազուկներ կային, որոնք կծկւում ու բաց-
ւում էին հարւածների հետ ներդաշնակ, հաստ, հզօր
թիկունքներ, որոնք գալարւում, կռանում ու բարձրա-
նում էին մեքենաների քմահաճոյքով և ծով քրտինքը
ծորում էր խոժոռ ճակատներից, յօնքերից, ակօսում
էր դէմքերի մուրը, ընկնում, տրորւում էր ստների
տակ աղտոտ շաղախի մէջ: Եւ անվերջ, համատարած
մի անքոց, երկունքի պէս ծանր ու խորունկ, բարձրա-
նում էր հազար կողմից, խառնւում էր հողմերի սոյլե-
րին, փարում էր ծխնելոյղների և վիշկաների կատար-
ներին ու գնում էր խեղդելու թաց մթնոլորտի մէջ:

Աղտոտ մշուշապատ փողոցներում երևում էին հաա-
հաա բանւորներ, որոնք երկարավիզ կօշիկները ցեխե-
րի մէջ քաշ տալով անցնում էին դանդաղ ու յովնած,

ու կորչում այս ու այն գործարանում: Երբեմն յայտնը-
ւում էր մի ծածկւած կառք, որ շառաչիւնով ակօսում
էր ցեխը ու այս ու այն կողմը ցրել տալիս, ապա կրկին
տիրում էր ամայութիւնը, և ձիւնախառն անձրեւը մաղ-
ւում էր, մաղւում: Չը գիտես որտեղից յանկարծ հընչ-
ւում էր մի սուլիչի՝ սուր, անախորժ ձիչը, որ համա-
տարած խոնաւութեան մէջ հօնքւում էր ու մեռնում:
Ճաշն անց էր արդէն, երբ արարանցի Մուքէլը,
մի կարճահասակ ու պնդակազմ երիտասարդ, իր գօր-
ծատեղը գնաց՝ երկրորդ հերթին:

Դժկամակութեամբ մտաւ գործարան. ձիւնն ու
անձրեւը թրջել էին նրան և առանց այն էլ նաւթից
միշտ թաց իր զգեստներն այլ ևս չեն տաքացնում
մաւմինը. վիշկայի տակ ցուրտ է. տեղ-տեղ անձրեւի
կաթիլներ են ընկնում անհաճօյճ փիւնով: Քամու ձայնն
էլ չի սիրում. ու մի քանի անգամ ատամների արան-
քից մոմաց.

— Անտէր մնաս, հա...

Այնուամենայնիւ նա պինդ բռնել է լծակը ու լաւ
գիտէ, թէ երբ պէտք է շարժել այն, որպէս զի նաւթա-
հան դոյլը վար իջնի հորը, ապա վեր բարձրանայ լե-
ցուն: Ուշադիր ու ակնապիշ նայում է առաջի անիւի
պտոյտներին, բարձրացող ու ցածացող շղթային: Քա-
մու ձայնից դուրս՝ նա ոչինչ չի լսում. մեքենաների
աղմուկին այնպէս է ընտելացել, ինչպէս մարդը ընտե-
լանում է ջրվէժի միալար ու յարատե շառաչին, ինքն
էլ մի մասն է կարծես հանքերի, գործարանների այդ
անձայր որոտին, այդ փնչացնող, հեացող խողովակնե-
րին ու հնոցներին, այդ համաչափ ու տենդոտ շարժու-
մին. ու մեքենաների պէս անդիտակից՝ կատարում է
իրեն յանձնւած գործը միանգամայն անտարբեր՝ թէ
ինչ է դառնալու հետեանքը:

Սկզբում մի քանի շաբաթ նա գիշերային պահապան էր. յետոյ բահ տւին ձեռքը ու պատւիրեցին նաւթահորի շուրջը ցեխերը մաքրել. ապա կանգնեցրին մի հնոցի առաջ, ի վերջոյ սովորեցրին լծակը շարժելով, հորից նաւթ քաշել ու ասացին, որ նա այժմ տարաւ լըշիկ է: Այդ բոլոր փոփոխութիւններից նա բնաւ չէր տրտնջում, յանձնւած աշխատանքները կատարում էր հաւասար բարեխղճութեամբ, ինչպէս և լուռ հնազանդում էր, երբ հանրակացարանում նրա տեղն ուրիշին էր տրւում. «միւնոյնն է, մտածում էր նա, հորդ տունը չի, ծառայող ես, արն, ինչ որ պատւիրում են, դարձիր, ուր կասեն, միայն թէ...»

Այդ «միայն թէ»-ն իր անյայտ, փոքրիկ գոյութեան մեծ երազն էր:

Միայն թէ կարողանար տնտեսել հարիւր յիսուն բոլբլի. այդ գումարը նրա գերագոյն երջանկութիւնը պիտի կերտէր: Յիսուն բոլբլին հօր պարտքն էր, որ թանգութեան տարին վաշխառուից առել էր զաւակները սովից փրկելու համար. հարկաւոր էր շուտով վճարել, քանի տոկոսները շատ չեն շահել. մնացած հարիւր բոլբլին իր հարսանիքի փողն էր—Մուքէլը նշանւած էր և գիւղում նրան սպասում էր Թոսաննից կարմրաթշիկ աղջիկը, այն սիրուն Սաթօն:

—Սաթօ, ջան Սաթօ...

Ու նա խորունկ ախ քաշեց:

Մի տարի է, ինչ հեռու է, չի տեսել. լուրերն էլ այնպէս ուշ-ուշ են գալիս գիւղից. չըզիտէ նոյն իսկ, թէ հայրը այն անիրաւ պարտքից ազատուել է, թէ ոչ. քանի անգամ փող է ուղարկել տուն այդ նպատակով: Գիր չըկայ. թիւ պիտի գրի. ձեռունի հայրը՝ անգրագէտ. գիւղում տէրտէր, վարդապետ չըկայ. թէ գրող էլ ճարւի, քանի՞ ժամ ճամբայ պէտք է կտրել նա-

մակը պոստին յանձնելու համար. հիշտ բան չի, հայրը մենակ մարդ է, հազար ու մի ցաւի, հոգսի տէր:

Քամին կրկին ճռագրեց տախտակները, վիշկան դողողաց և ջրի կաթիլները սաստկացան:

—Հայ անտէր մնաս, վերստին մոռաց Մուքէլը:

Ու յիշեց, թէ ինչ քամիներ են լինում իրենց երկրում, ինչ ձիւն, ինչ բուք-բորան. ճամբայ չըկայ, ձորերում, սարերում փոթորկից մարդ է խեղդում. երկար ձմեռը, անէծքի պէս թառում է ցածրիկ խորճիթների վրայ ու ութ ամիս անարև երկինքը ցատումով ու խոփոտ է նայում վար:

Մի մարդ էլ չեկաւ լուր բերի, մտմտաց ինքն իրան Մուքէլը:

Մեքենան դործում է անընդհատ. անիւը դառնում է համաշափ ու թափով. նաւթահան գոյլը Մուքէլի ձեռքի փոքրիկ շարժումով իջնում է շառաչիւնով խոր, խոր, մինչև երկրի արզանդը, ապա նորից խուլ աղմուկով վեր ելնում, դուրս թափում դեղնաւուն, փոփրուն հեղուկը: Այնուհետև ուր է գնում այդ հեղուկը—Մուքէլը չըզիտէ, բնաւ պէտք էլ չի զգում իմանալու. նա գիտէ միայն, որ դա փող է, ծով հարստութիւն, որը տէր ունի. գիտէ, որ ինքը այդ լծակը ճիշտ ժամանակին պիտի շարժի, որպէս զի ստանայ ամսական քսան ու մէկ բոլբլի:

Ու այսքանով գոհ է...

Նա աշխատում է վանել թաց, ցուրտ օրւայ մըռայլը և ինչպէս լամեն օր՝ անձնատուր լինել իր կորագներին. այս ժամերին նա ասես երկու մարդ է, մէկը ճիշտ մեքենայի պէս դեկավարում է լծակը, շարժում շղթան, հորի մէջ թաղում գոյլը ու հանում կանաւորապէս. միւսը՝ վերապրում է անցած յուշեր, հմայիչ պատկերներ ու ստեղծում է նոր, գոյտրիկ

հեռանկարներ: Եւ բոլորի վրայ իշխողը միշտ Սաթօն է, իր սեւաչեայ, կարմրաթուշ նշանածը: Հայրենի դաշտ, լեռ ու ձոր մշուշի մէջ կորած՝ թռչունների երամի պէս շարան-շարան անցնում են աչքի առաջից և յանկարծ... Սաթօն, արտում վար է անում, ցիւլը ափօս-ափօս փրու-ւում է, լայնանում, յետոյ կանաչ արտ, յետոյ հասած ուկեթոյր հասկեր ու նորից Սաթօն մինչև իրանը ցո-րենի մէջ թաղած, ու ժպտուն դոյզ եզներն է յիշում, մէկը կարմիր է, միւսը՝ սև, այս վերջինն անհնադանդ է, յաճախ սամի է կոտրում, այս պատճառով դրսի կողմի սամին երկաթից է... իրենց սան դուռը ճոռում է ափսպէս բարձր, մանաւանդ ձմեռանը: Խրճիթը ցածր է ու մրոտ. բազմապիսի չունի, առջևից անցնում է դաշտերի ճամբան, որտեղից գիւղացիք աշխատանքի են գնում, անասուններն՝ արօտի, աղջիկները՝ քաղհա-նի ու դարձեալ... Սաթօն, գոյնդգոյն թաշկինակը գըլ-խին, մագերի վեց երկար հիւսիս սիրուն թիկունքին ալիծածան. ուղիղ վեց է, Մուքէլը շատ լաւ գիտէ, ա-մեն մէկը ջուլ-ջուլ համբուրել է, հոտոտել, որպէս ծա-ղիկ: Կարօտի անուշ թախիծից աչքերն են թաց անում, և նա ժպտում է արցունքի միջից այդ արեցուցիչ պատկերին...

— Ծնւտ արի, Մուքէլ ջան, շուտ արի—Սաթօի վերջին խօսքերն էին մեկնելու նախընթաց երեկոյին, երբ Մուքէլը գաղտագողի տեսաւ նրան. ու պատաս-խանն եղաւ մի համբոյր... բոց համբոյր, որ օրեր շա-րունակ ետում էր իր շրթունքներին:

— Աչքս ճամբիդ է, համ, բալա ջան, ասաց հայրը, մինչդեռ մայրը ծածուկ լացեց, որ հայրը չըտեսնի:

Այն օրից անցաւ ահա մի տարի. վերադարձի ժամը հեռու չէ—ամիս ու կէս, կամ երկու ամիս. հար-սանիքի փողը լրանալու վրայ է. գուռնաչի Նաւօն ինչ

կը կլկլացնի, պար... դեօնդը երկար, երկար ու... Սա-թօն:

— Սաթօ, ջան Սաթօ...

Քամին անախորժ շառաչիւնով զարկեց վիշկայի կատարին, մի տախտակ պոկեց, ձիւնն ու անձրևը ներս շփեց:

— Հա, ես քո ակն անիծեմ:

Մուքէլի սիրուն երազները շաղկեցին, նա սար-սուաց ցրտից, կծկեց. դոյլը շինդով դուրս եկաւ ու թափեց, բայց մազ մնաց, որ սովորականից աւելի բարձր նետէր. Մուքէլն զգաստացաւ, երկու անգամ ուժգին ու խորը շնչելուց յետոյ. նա թողեց մաքերը, հայեացքը նշանին բեւեռած՝ ամբողջապէս իր գործին եղաւ:

Եւ քամին դրսում ծեծւում էր, ծեծւում...

II

— Բնրի աջողում, անպէր:

Ներս մտաւ մի միջահասակ, թխադէմ երիտասարդ, հաստ մահակը ձեռքին, ահագին մորթէ փափախը գըլ-խին, դեղին աբան թիկունքին, ցեխոտ տրեխները պինդ կըած ոտներին ու դոյզ զանկապանները սրունք-ներին:

Մուքէլը նախ շուարած նայեց, ապա հրճուանքով բացականչեց.

— Վայ դու հնգար բարի, Սեդրակ ջան... Կանց, կանց, մի առաջանայ, տղայ, շարունակեց նա աչքը չը հե-ռացնելով լծակից, երբ նորեկը դէպի ինքը նետուեց— կանց, էս սատանի բան ա, ձեռքից թողնել կարելի չի, տներս կը քանդաւ:

Նորեկը նախ մնաց բերանաբաց, աչքերում անո-րոշ երկիւղ, ապա կարծես անակնկալ հարուածի առաջ՝

յիտ-յետ քաշուեց, թիկունքը պատին տուեց ու քարացաւ իր տեղում:

— Նստի՛ր, Սեդրակ ջան, նստի՛ր էն գետնի վրէ՛ն, մնտաղ... Հը՞, ի՛նչ կայ, ի՛նչ չըկայ գեղում:

Սեդրակը լուռ էր:

Մուքէլի հօրաքրոջ որդին էր. հասակակից ու սրտակից ընկերներ էին. միասին մեծացել էին եղբօր պէս, ու շատ սիրում էին իրար. նա շատ կոտորեց, երբ Մուքէլը թոյլ չըտուեց նրան առաջանալ, լռելեայն նստեց կողքի գերանի վրայ, փափախը հանեց, ջուրը թափ տուեց, հազաց, քիթը սրբեց, բայց էլի մնաց լուռ:

— Տօ՛, ձէ՛ն տուր, տննչէ՛ն, լեղուդ կապա՛ւ... ասան ի՛նչ խաբար ես բերե, սաղ, սալամաթ են:

— Շատ բարով ին անում... ափօդ աղէկ էր, մէրդ էլ... զըմմէնն էլ բարեւում ին...

— Բա Սաթօն, անհամբերութեամբ հարցրեց Մուքէլը:

— Սաթօն էլ, դէ, ասաց՝ հալի հալրաթ շատ բարով տար ու էս էլ տուեց, որ քեզ բերեմ: Սեդրակը հանեց ծոցից մի գոյնգգոյն թաշկինակ և վերկենալով տարաւ դէպի ընկերը. Մուքէլը այս անգամ չըբողոքեց, աջ ձեռքով միշտ լծակը պահած, ձախով առաւ թաշկինակը, տարաւ երեսին, հոտոտեց, ժպտաց, համբուրեց ու կոխեց ծոցը:

— Ափօդ էլ էն վերջի տաանուհինգ մանէթն ստացաւ, ասաց Սեդրակը վերստին իր տեղը զրաւելով:

— Տաանուհինգ... կրկնեց Մուքէլը խոժողած:

— Հա՛, տաանուհինգ:

— ԶԷ՛ ես քսան զրկեցի:

— Հինգը տաանուհէրն ա վերցրե ոտի քրէն:

— Հայ անհոգի... տնաստանձ, մոմաաց Մուքէլն ատամները արանքից ու լռեց:

Աբարանցի բանւորները բոլորն էլ փողն ուղարկում էին գաւառի կենտրոնական գիւղը, ուր պոստ կար. տաանուհէրն ստանում էր ծանուցադրերը. «վասն անգրագիտութեան» վաւերացնում էր կնքով, ապա գնում էր դրամն ստանում «ըստ պատկանելոյն» յանձնելու համար. և յանձնում էր միշտ... մի մասը լուրացնելուց յետոյ որպէս «ոտքի վարձ»: Սա հին կարգ էր. բանւորները գիտէին, երբեմն իրար մէջ տրտունջ ու զայրոյթ էին արտայայտում, վերջիվերջոյ գոհ մնում, որ զոնէ մնացածը տեղ է հասնում:

— Հինգ մանէթ միանգամից... լուռութիւնն ընդհատեց Մուքէլը, գոնեա երկուսը վերցնէր կռապաշտ անհոգին, թող բարձի տակին ուտի, վերջացրեց նա սիրտը հովացնելու համար, և երկու ընկերներն անցան այլ նիւթերի:

— Բա Սաթօն... Սաթօն, ուղղեց նա, — էլ ի՛նչ ասաց ախր:

— Ի՛նչ պիտի ասէր... ասեին էլ էն էր, թէ հալի հալրաթ շատ, շատ բարով տանես ու ասես, թող շուտ գայ:

Պատմողը նշանակալից կերպով ծիծաղեց, Մուքէլը հրճեց, սիրտը անուշ յոյզով դողաց ու աչքերի մէջ երազուն ժպիտը խաղաց:

— Սեդրակ ջան, Աստուած սիրես, բոյը, բոյը ի՛նչ պէս ա, բարձր, համ...

— Զինար, Սաթօն մի հաոտ ա սաղ գեղում:

Մուքէլի սիրտը կրկին թրթռաց. անզուսպ ցանկութիւն ունէր ճշալ, երգել, մի լաւ բան անել. դոյլը բարձրացաւ ու նաւթը թափեց, ու նա այս անգամ ուժգնօրէն շարժեց լծակը, ու շղթաները շառաչելով ցած իջան:

— Մուքէլ, նաւթն էս ա, էլլի, հարցրեց Սեդրակը, որ մինչև այդ ականապիշ նայում էր օդի մէջ տարուբերւող մետաղեայ ահագին դոյլին ու շղթայի տեղ ծառայող երկաթէ ձողին։

— Նաւթ ա, բա ի՞նչ ա, պատասխանեց Մուքէլը առ հարկի և ի ներքուստ դժգոհ՝ որ իրեն զբաղեցնող հարցից ընկերն անցաւ այլ նիւթի։

— Ախր նաւթը զուլալ ա, էսի պղտոր ա։

— Ի՞նչ իմանամ, անտէր մնայ, յետոյ տանում, զուլալում են... տօ դէ ջհանդամը նաւթն էլ, տէրն էլ, շարունակեց նա, դու էն ասա, հէրս էն անտէր պարտքը տւեց, վերջացրեց, թէ մնում ա։

— Տւեց, Դնց չը տւեց, քիչ ա մնում, տաս-տասնը-հինգ մանէթ։

— Ի՞նչպէս թէ մնում ա, ախր ես յիսուն մանէթից շատ աւել եմ զրկի։

— Աւել ես զրկել... բա տանուտէ՞րը...

Պատասխանը ջախջախիչ էր. Մուքէլը մոռացել էր, որ իր վաստակի մի բաժինը տանուտէրի գրպանն է մտել. նա ինքն իրան կորցրեց սաստիկ զայրոյթից։

— Սև սրտով փող դատես, շուն ու գէլ ուտի... հայ ես... և մի ծանր յիշոց՝ ինչպէս գարշահոտ ցեխի մի գունդ շարտեց տանուտէրի մեռելների հասցէին. այս անգամ նրա սիրտն իսպառ հովացաւ։

Վերստին լուծիւն տիրեց, լուծւում էր միայն մեքենաների խլացուցիչ շառաչը, քամու անվերջ ազմուկը։ Մուքէլը դեռ էլի հազարումի բան ունէր հարցնելու գիւղի, բարեկամ-ազգականի, դուռ-գրացու մասին, և մանաւանդ Սաթօի մասին. ու չը գիտէր ինչից սկսել։

— Դեղը տէրտէր կա՞յ, հարցրեց նա յանկարծ առանց մտածելու ու դժգոհ մնաց իր հարցից։

— Տէրտէր ռրաեղից... տիրացու Մարկոսի գործն

էլ ջուրն ընկաւ. չուզողները հակառակ կացան, խընդիր տւին, հազարումի սուտ, զորթ, գեղի բանը գիտես, էլլի, չը կամութիւնը շատ։

— Մեռնող, ապրող...

— Հէ՛յ, տատմէր Գուլէն արեւ քեզ բաշխեց։

— Չարդ տանի... թանգութիւն, էփանութիւն...

— Հացը թանդ ա, անասունների կերն էլ շատ պակաս ա. մեր քաւոր Դէվօհնց դէզն էլ վառին, ասում ին Սրքէի տղէն վառեց։

— Հա, Սրքէի տղէն կ'անի, շան ծիծ կերած ա... աշնան հարկը ժողվի՞ն։

— Բա չը ժողվի՞ն, հարկ կը մնայ, կաշի են քերթում, կայ չը կայ հարցնողը Դրն ա... Մնեցեց Կիրակոսի ձեռն էս տարի շատ պակաս էր, դէս-դէն ընկաւ, օրերով գեղից փախա առաւ, չօլերն ընկաւ, վերջը բռնեցին բերին, գեղամիջին քնքան ծեծ տւին, քնքան ծեծ տւին, մէկ Աստուծ ասի բօլ ա. ես ասեմ տանահինդ, դու ասա քսանհինգ դամշի քաշեցին մէջքին եասավունները, ողորմելին հալից ընկաւ. է՛հ, ի՞նչ ասեմ, անպէր, մենակ Կիրակոսը տփաւաւ... բա Հովէն, բա Մկճն... էլ մարդ մնաց, որ ծեծ չուտա. վէրան մնայ դեղը, հասնողը գլխին դմփում ա. ոէսը՝ ծեծ, տանուտէրը՝ ծեծ, եսսավուը՝ ծեծ։

— Հա, մեր խալխին շատ են տփում, հաստատեց Մուքէլը մտածկոտ, ու դրանով սպառեց այդ ցաւոտ հարցը։

Սեդրակի հայեացքը կրկին գրաւեց հորից բարձրացող դոյլը։

— Մուքէլ, էս էլ ջրհորի պէս ա, էլլի. շատ խորն ա։

— Բա խորը չի։

— Բանի գաղ կ'ընի։

— Հազար։

Սեղրակը գլուխը տարուբերեց զարմանքով:

— Բո տունն աների մարդ, էդ իման են փորում... Մուքէլ, օրական ինչքան նաւթ դուրս կը գայ էսպէս:

— Է՛հ, Աստուած գիտա, ինչքան ասես... գետնի տակը նաւթի ծով ա... Սեղրակ, դուն էլ աշխատանքի եկար, էլի՛, շարունակեց Մուքէլը խօսակցութիւնն իր ուզած նիւթին դարձնելու համար:

— Դէ բա ի՞նչ անէի, ապրուստ չի մացե գեղում. ասի երթամ, ըսկի չէ՛ դարնան հարկը, քիչ էլ սերմացուի փող ձեռք գցեմ, դառնամ. ամիսն ի՞նչ են տալի, Մուքէլ:

— Բասնմէկ մանէթ:

— Լաւ փող ա, ասաց Սեղրակն ու լոնց, մտքում ինչ-որ հաշիւներ անելով:

— Լաւ փող ա, թէ տեղ, գործ ճարւի. էնքան պարագա-սարագ մարդ կայ, անհաշիւ... հրէն Հովէնց Մանուէլը պարագութիւնից խող ա պահում:

— Հա, խաբարն եկաւ գեղը, խեղճ հէրը ամօթից գլուխը դուն չի հանում. ամա Բանօնց Ալեքսանի ձէնը լաւ ա գալի:

— Ալեքսանի բանն ուրիշ ա, մարդը ուսում ունի ու մի հետ իր փառքին, պատւին տիրացե, դարագավոյ ա դարձե, ամսէկան երսունհինգ մանէթ փող ա ստանում:

— Երսունհինգ մանէթ... ու Սեղրակը գլուխը օրօրեց զարմացած:

— Է՛հ, անպէք, թող նրա ուսումը իմն ընէր, երսունհինգ չէ, հարիւրհինգ մանէթ ստանայի. էս աշխարհում ուսումն ա բան տեսնում, գիրն ու դաւամը:

Բանօնց Ալեքսանը փոքրիկ պատմութիւն ունէր: Նա հազիւ գրել-կարդալ գիտէր հայերէն, իսկ գինւորութեան ժամանակ սովորել էր նաև ստորագրել ա-

նունն ուսերէն. ահա այդ «ուսումով» դարձիւ էր քաղաքապա՛հ. ոստիկան ու իր բոլոր համերկացիները նախանձի ու զարմանքի առարկան: Ամենքը գիտէին, որ «նա ուսում ունի, ու իր ուսումի դօրին իր փառքին, պատւին տիրացեւ ա». նրա հռչակը հասել էր մինչև գիւղ:

— Դրուստ ա, Մուքէլ, Ալեքսանի բանն ուրիշ ա, կրկնեց Սեղրակը ընկճած, մեր բանն ա դժար. ապա գործի համար ի՞նչպէս անենք:

— Ի՞նչ ասեմ, անպէք, մարդ պէտք ա, չուն Աստուած դուն էլ մարդուս մարդ պէտք ա. թէ կարենաս մեր Վահան աղից մի գիր բերես մեր կառավարչի վրէն:

— Տէրտէրե՛նց Վահան աղից:

— Հա, հէնց Տէրտէրենց Վահան աղից. քաղքի մէջ ձէնը շատ մեծ ա, շատ յարգի ա: Ես էլ որ նոր եկայ, շատ դէս-դէն ընկայ, սրան-նրան խնդիր, աղաչանք—լսողն ճիւղ, հարցնողն ճիւղ, բան չի դուրս եկաւ. վերջը գացի Ալեքսանին գտայ:

— Գարագավոյի՛ն:

— Հա, գարագավոյին. էն էլ, օղորմի իր հօրը, ասաց գնա Վահան աղին տես, մի գիր առ. գացի, շնորհակալ եմ, մի գիր տւեց մեր կառավարչի վրէն. առայ, բերի, կառավարչի դռանը դօշունի չափ մարդ կար, զըմմէն գործի համար. որը խնդրեց, դուս արաց, որը գիր տւեց, ճղեց, թալեց դէն. թուքս կաւա. ասի վալլահ իմ գիրն էլ կը ճղի, վախվախով գիրս պարգեցի, առաւ իշկաց, անունը տեսաւ, թէ չէ, ուսնողը թուաւ, դարձաւ ընձի, թէ «դու Վահան աղին ի՞նչ կը ճանչնաս»:— Մեր մտալի մարդ ա, ասացի, անպէք, էնոր ճիւղ չի ճանչնա, ձէնն աշխարհը բռնեւ ա. ձէն տւեց ծառայողներին. — «Էս սհաթին էս աղին տեղ արէք»,

ու էսպէս աջողակ ընկաւ զործս. Վահան աղի դիրն ուրիշ բան ա, քարի վրէն դնես, քար կը պատուի, Աստուած իր բանն աջողա:

Երկու ընկերները որոշեցին, որ Սեդրակը յաջորդ օրն իսկ գնայ Վահան աղի մօտ. ապա դարձեալ անցան գիւղի դարդ ու ցաւերին: Մութէլը վարպետօրէն մի քանի անգամ խօսքը դարձրեց Սաթօին. նրան միշտ թւում էր, թէ ընկերը բոլորը չի ասել, թէ և ինքն էլ չը գիտէր, թէ ինչ է սպասում: Հնչեց երեկոյեան դադարի ժամը. եկան Մութէլին փոխարինելու. նա ցած իջաւ տեղից, նորից հարց ու բարև Սեդրակի հետ, և երկու ընկերները դուրս գալով դէպի հանրակացարանը գլխացին:

Դրսում արդէն խաւարն իջնում էր:

III

Անձրեն ու ձիւնը դադարել էին, բայց քամին աւելի սաստիկ էր ու աւելի ցուրտ:

Չորս կողմից վաստակաբեկ բանւորներ հատ-հատ կամ մռայլ շարքերով դիմում էին դէպի հանրակացարանները: Երեկոյեան մշուշի մէջ նրանց երեւուն ստւերներն անցնում էին տարտամօրէն դանդաղ, անձախ ու խոհուն, ապա մեղմիւ լուծւում էին թանձրացող խաւարի մէջ: Եւ նրանց յամր շարժումների, վհահերոտ, ճնշւած ընթացքի մէջ չը կար կատարած աշխատանքի գիտակից հրճանքը, որ այնպէս քաղցր ու հրապուրիչ է դարձնում հանգստեան ժամերը: Բութ յոգնութիւնը, յաջորդ օրւայ դաժան վաստակի հեռանկարով ծանրացած էր ամենքի ուսերին այդ թաց, լպրծուն խաւարի հետ. ոչ կատակ, ոչ քրքիջ, ոչ երգ: Ու հազար կողմից դարձեալ փնչացնում էին մերկնա-

սերը անքացող դժգոհ դադանների պէս, հեռւմ էին հնոցներն ու խողովակները, ծուխ ու գոլորշու ամպեր, դալարւում էին խաւարի հետ ու լուռ, վիթխարի խոնջանքի վրայ, հողմածեծ գիշերն էր իջնում վայելով:

Մութէլն ու Սեդրակն արդէն բակի կենտրոնումն էին:

— Տօ, էստեղ մտիկ տրա, Աստուած սիրես, ասաց յանկարծ Սեդրակը կանգ առնելով: Մի հարբած ուռւ բանւոր, թրջւած, պատառոտուն, ցեխոտ, մեն-մենակ կանգնել էր բակում ու առջևի ծխնելոյղին ինչ-որ ասում էր բարձրաձայն, սպառնում, խնդրում, հայհայում. քամին տարել էր գլխարկը և խառնում էր մադերը. մարդը դողում էր ցրտից, երեւում կանգնած տեղում թանձր ցեխի մէջ, բայց չէր դադարում բարձրաձայն խօսել ծխնելոյղի հետ, որի կատարից բարձրանում էր մերթ թանձր ծուխ, մերթ մութ, ծխախառն բոց, որ կայծեր էր ցանում խաւարի մէջ, վայրկենական փայլով լուսաւորում մթնոլորտը:


— Տո՛ւր, ասում եմ, էէ, տո՛ւր, ճշում էր հարբածը բռունցքները դէպի վեր, դէպի ծխնելոյղն ուղղած սպառնազին:

— Տօ, Մութէլ, ողորմի քո պապերին. էն ինչ ա տսում:

— Ինչ պրտի ասի, հարբած մարդ ա, էլի. դու ա տալի, ուզում ա անպատճառ էն վերի կրակի պէծիներով իր չիբուխը վառի. սաքի թէ ցածի կրակը բաւական չի:

— Օջին մարդ ա. ու երկուսով էլ ծիծաղեցին: Նրանք անցան, մինչդեռ յետևներում դեռ լսում էր հարբածի կատաղի կանչը ոտոցն ու հայհայանքները: Բակում զոյգ ձիւնով մի կառք կանգ առաւ. ցած

3640 - 2002



իջան՝ երկու պարոններ՝ մէկը՝ երիտասարդ, միւսը տարիքով։

— Էն ջահէլը մեր կառավարիչն ա, տապ Մուքէլը, էն մէկէն էլ էս բոլոր հորերի տէրն ա, խաղէյինը։

— Կառավարիչն ի՞նչքան ոռճիկ կ'առնի, Մուքէլ։

— Հարիւր հազար։

— Եմ! Սեդրակը մի վայրկեան կանգ առաւ քարացած, ապա առաջացաւ լուռ մտածմունքի մէջ. հարիւր հազարը աներեւակայելի թիւ էր, որ Մուքէլը ասաց կարծես ընկերոջը սասանեցնելու համար։ Որպէս աւելի փորձած, գիտակ, նա առանձին հաճոյք էր զգում իրեն շրջապատող միջավայրը որչափ կարելի է ապշեցուցիչ, ցնորական դարձնել Սեդրակի համար։ Եւ իրօք Սեդրակն ապրում էր մի մղձաւանջի մէջ. ամեն ինչ շրջապատում հրաշք էր նրա համար. միաժամանակ նա սքանչացած էր Մուքէլի գիտութեամբ։

— Տօ, Մուքէլ, դու ինչքան բան գիտես։

Ընկերը լուռ էր, բայց խաւարի մէջ ժպտաց, նրա գեղջուկ, միամիտ փառասիրութիւնը շոյւում էր. բայց քամին սաստկացաւ, ցուրտը նեղում էր։

— Շուտ, շուտ գնանք, ասաց նա. ցուրտ ա. էս անիրաւ քամին էլ խօ իմ հոգէս. հրեշտակն ա, շորերս էլ նաւթոտ են, միշտ թաց, չորս կողմից նաւթ ա, որ մաղւում ա մարդու գլխին. տաքանալ չի ըննում։

Նրանք շտապով կտրեցին բալն ու անցան։

Քիչ յետոյ՝ Մուքէլն ընդհանուր խոհանոցում հնոցի առաջ կանգնած՝ թէ տաքանում էր և թէ ընթրիքի համար թէյի ջուր կռացնում։ Սեդրակը քիչ հեռու՝ յենւած էր պատին, զարմացած նայում էր այս տարօրինակ հնոցին, ուր փայտի փոխարէն ինչ որ սև հեղուկ ծորալով խողովակից, վայրկենապէս ուժեղ բոց էր կըտրում։

— Էսէնց էլ օջաղ... հայ քո տունն աւերի, մարդ, դու ինչէր կանես, ասաց Սեդրակը հիացած։

— Կանց, հըլա ինչէր կը տեսնաս, էս ի՞նչ ա որ. էն պատիկ մարդը խօ տեսար, մեր կառավարիչը, աշխարքի խելք կայ գլխին. ողջ նրա շինածն ա. ամա շատ լաւ մարդ ա, հէջ մէկիս չի ասի՝ աչքիդ վերին ունք կայ. ու ամեն բանի էլ լաւ վերահասու ա, խաղէյինը տարին մի քանի հետ՝ եւ էրեայ, եւ չէրեայ, զըմմէն կառավարչի ձեռին ա։

— Մուքէլ, բա էդ խաղէյինը ի՞նչքան հարստութիւն կ'ունենայ։

— Խաղէյինը, Սեդրակ ջան, ի՞նչ ասեմ, ու Մուքէլն աչքերը վեր բարձրացրեց կարծես հաշուով խաղէյինի հարստութիւնը — խաղէյինը Աստծու կրակի տէրն ա։

Այս անորոշ ու գրեթէ արտառոց պատասխանը, որ լիովին դժացրեց Սեդրակին, չէր արտայայտում ոչ Մուքէլի զայրոյթը, ոչ նախանձն ու քէնը։ «Աստծու կրակը» նրա համար հարստութեան գերագոյն չափն էր։

Չէ որ հարուստն իր դրամի ուժով երկնքի շանթերն իսկ կարող է ցած բերել։ Մուքէլը նոյնիսկ հպարտ էր, որ «իւր խաղէյինը» այդպէս հարուստ է. նրա համար ոչ մի կապ, ոչ մի առնչութիւն դոյութիւն չունէր այդ «Աստծու կրակի» և կեանքի ցաւոտ մեծ կրակի մէջ։ Նա գիտէր միայն, որ ինքը մի գիւղացի է, Աւշոնց Մուքէլը, քողաք է եկել «արդար քրտինքով հալալ աշխատանքի», գիտէր նաեւ, որ այդ աշխատանքի համար իր «արդար իրաւունքն է» ամսական քսան և մէկ բուրլի, ոչ աւել, ոչ պակաս. համոզւած էր, որ խաղէյինի իրաւունքն է այն «Աստծու կրակը», որ օր ու գիշեր որոտալով դուրս է ժայթքում երկրի կրծքից։

Դիտէր, որ աշխարհում այդպիսի մարդիկ հարկաւոր են, որ «քետսիւր-քիւսուրին իրենց թևի տակ պահեն, պահպանեն»։ Գիտէր այս բոլորը և հողին միանգամայն խաղաղ էր ու խիղճը՝ հանգիստ։

Սեդրակը սակայն մտազբաղ էր. տեսած լսածներն տակ միտքն ընկճւած, նա գրեթէ անուշ էր, Մուքէլը չէր ուզում ընկերոջն այդպէս տեսնել. մարմինը տաքացել էր արդէն, տրամադրութիւնը լաւացաւ։

— Ի՞նչ ես միտք անում, անուշ, բացականչեց նա խնդաձայն, քաջալերիչ շեշտով, աշխարքի հիմն անիծեմ, ինչպէս անես, էնպէս կը դնայ. հարուստը՝ հարուստ կ'ըլնի, աղքատը՝ աղքատ. քէֆդ տեղը պահի, տղամարդ կաց. ո՞վ ա սուանց մի կտոր հացի մնացե, որ մենք մնանք. ողջութիւն ըլնի, մնացածը հեշտ ա. դու Սաթօից ասա, Սաթօից. շատ բան ասա։

Սեդրակն էլ ասելիք չուէր, ամեն ինչ պատմել էր, ու ժպտաց։

Մուքէլի սրտում սիրած աղջկայ անւան հետ դարուններ փթթեցին ու աչքերը փայլատակեցին. սիրոյ կրակի փայլով։ Նա դուրս քաշեց ծոցից Սաթօի թաշկինակը, քնքշութեամբ բացեց, տարածեց օդի մէջ, նայեց, նայեց, ապա քսեց երեսին, հոտոտեց, կրկին շարժեց օդի մէջ, գլխից բարձր որպէս դրօշակ։ Ու մինչ Սեդրակը նայում էր ժպտալով, Մուքէլը խանդոտ սկսեց իր սիրած գեղջուկ երգը, որ Սաթօից էր լսել։

«Եայլուդս եարիս բաշխածն էր,

«Ալ արբեշումով նխշած էր.

«Պատկերս վրէն քաշած էր, եմք, եարօ ջան,

«Սիրուն տղայ, տնւր եայլուդս»։

«Զան, ջան, Սաթօ ջան», կրկնում էր նա երգի վերջին որպէս յանկերգ։

Զուրն արդէն ետում էր. ամանից ուժգին թշուրջ էր բարձրանում և գոլը ընդհատ-ընդհատ ծեծում էր խուփը. բայց Մուքէլն այդ չէր նկատում. նա երգում էր իր երգի յաջորդ տները նոյն աւիւնով, միշտ թաշկինակը ճօճելով ու բաղուկները տարածած օդի մէջ՝ ասես մէկին գրկելու համար։ Յետոյ յանկերգն էր դալիս խենթ ու բոցավառ, որպէս անհուն կարօտի, սիրոյ կսկիծի մի հզօր ճիչ։

«Զան, Սաթօ ջան...

Սեդրակը հիացմունքով ու քաջալերիչ ժպիտով հետևում էր ընկերոջ այս յանկարծական, այս խենթ ցնծութեան, ու դո՛ւ էր, որ ինքն է մասամբ պատճառ երջանկութեան այս սիրուն պատկերի։

Յամին մոնչում էր գրսում, հնոցի բոցը նրա հեքով մարակւած՝ որոտում էր աւելի և աւելի թափով, ու ողջ շէնքը զրնգում, դողում էր։

Մուքէլի փոյթը չէր, նա իր Սաթօն էր երգում։

Յանկարծ Սեդրակի դէմքն այլայլեց, նա աջ ձեռքը բարձրացրեց եղերական շարժումով ու ճչաց փոխւած ձայնով։

— Վառա՛ր, անուշ, վառա՛ր...

«Քո սիրով վառայ, Սաթօ ջան» եղաւ պատասխանը երգի եղանակով. Մուքէլը ոչինչ չէր տեսնում, բացի իր սիրածի պատկերը, որ թրթռում էր իր հոգում, ոչինչ չէր լսում, բացի իր երգի հնչիւնները, որոնք հնոցի բոցերի պէս դուրս էին թափւում կրծքից մերթ դողդողազին, մերթ խնդաձայն։ Աչքերը՝ փայլուն, դէմքին անօրինակ յափշտակութիւն, առնական կուրծքը յուզմունքից ալեկոծ, պարանոցը յետ ձգած ու շրթունքները համբոյրի համար կիսաբաց՝ Մուքէլը երգում էր, Մուքէլը երջանիկ էր, մինչդեռ Սաթօի թաշկինակը փողփողում էր նրա գլխին, որպէս սիրոյ յաղթական

դրօշ: Սեղրակը բազուկները տարածած, յուսահատ թափով նետուեց դէպի ընկերը, բայց սոսկումով յետ ընկրկեց աւելի բարձր, աւելի ուժգին ճչալով:

— Վառար, շորերդ վառան, քո տունն աւերի. ու նա դուրս վազեց լեղապատառ՝ օգնութիւն կանչելու:

Միայն այժմ հասկացաւ Մուքէլն իրեն սպառնացող ահաւոր վտանգը, ձեռքերը բնագործէն դէպի զգեստները տարաւ, բայց փէշի մի ծայրից կպած բոցը, վայրկենապէս, շուրջանակի բռնկեց նրա նաւթոտ զգեստները, նա փորձեց տրորելով մարել, իզմուր, արդէն ուշ էր, բոցերը չորս կողմից կարմիր օձերի պէս պարուրեցին նրա ողջ մարմինը ոտքից մինչև գլուխ:

Եւ Մուքէլը վառուում էր կերոնի պէս...

Անասելի զարհուրանքից դէմքն աւերակ, բերանը լայն բացած, ծուխ ու բոց շնչելով, բազուկները՝ որպէս վառ ջահի երկու ճաղեր օդի մէջ տարածած ու ծխացող թաշկինակը միշտ բարձր, գլխի վերև փողփողուն, Մուքէլը աղեխարշ, այլանդակ ոռնոցով մրրկի պէս դուրս ընկաւ խաւար բակում տարածելով մահաւան կարմիր սարսափը: Կատաղի հողմը գրկեց նրան, բոցերը մոմապին տարեքի ռուփին շնչով ու այլ ևս մարդ չէր նշմարւում, այլ մի հատիկ հրեղէն սիւն. Մուքէլը փախչում էր, խելայեղ պտոյտներ էր գործում փոթոթող, լափող կրակից ազատւելու համար ու իր խուկ վազքով հրահրում, բորբոքում էր բոցերը. կենդանի մարմինը եփւում, ճարձատում էր, մորթին ճաքճքւում ու կախկաւում էր ցնցոտիների պէս և թրթռուն, կարմիր միսերի ձենձերահոտը լցնում էր բակը:

Չորս կողմում խուճապ էր, անակնկալ ու զարհուրելի պատկերը շմեցրեց բանւորներին. իրարանցում, ճիչ, աղմուկ, երկիւղ. և իրար խանգարեցին, օգնութիւնը չը հասաւ, մինչդեռ Մուքէլը վազում էր ու եփ-

ւում, շրջաններ էր անում ու ոռնում, անասելի սարսուռով համակում ամենքին. ու այդ ճչացող հրեղէն սիւնը ինչպէս մահաւան կարմիր զառանցանք՝ անմիտ, շմեցուցիչ պտոյտով անցաւ հանրակացարանի առջևից, թափ առած՝ նետուեց դէպի բակի գլխաւոր մուտքը, կրկին յետ դարձաւ, վազեց դէպի գրասենեակը, խոյս տուեց դէպի բակի կենտրոնը, ու միշտ դեղնակարմիր բոցեր արձակելով, շրջանները փոքրացրեց, մի քանի անգամ գալարեց ինքն իր վրայ ու խորտակեց գետին: Եւ երբ ուշակորոյս բազմութիւնը վրայ հասաւ, երբ վերջին պահուն մտածած թաց վերմակները բերին, կենդանի մարդու փոխարէն նրանց առաջ ծխրտում էր միայն խանձած, ձենձերոտ միսերի ու ոսկորների սարսեցուցիչ կոյտ:

— Եայլմը... Մաթճն... հեծեծում էր Սեղրակը և ոչ ոք չը հասկացաւ այդ բացականչութեան իմաստը, լուռ էին ամենքն ու գլխակոր. ոչ հեռանում էին, ոչ մօտենում. շրջան կազմած՝ ամենքը նայում էին առաջների սև կոյտին, ու քամին ծեծում էր, ծեծում էր նրանց թիկունքները: Մօտեցաւ հարձած մարդը:

— Հաւ... անիծւած կրակ, չիրուխիս համար չը կար, խկ ողջ մարդը վառուեց... սատանան գիտէ... Հաւ, տեսայ... վազում էր... ո՛ր ես փախչում, եկել է նա, ուրեմն կանգ առ... հա, հա, հա... արի ու մի խմիր. մարդը կար՝ ու չըկայ, վառուեց... կենդանի մարդը վառուեց, էէ, հի, հի, հի... Աստուծ գիտէ...

Ու նա հեռացաւ օրօրւելով ու կորաւ խաւարի մէջ. հեռուից դեռ երկար լսում է նրա այլանդակ երգը.

«Խմիր, խմիր, վիշտը կ'անցնի»...

IV

Կառավարիչ Ալմադեանը կամ Գրիգորիյ Եղնակոյ վիշը, ինչպէս նրան կոչում էին ամենքը, տակաւին

երկառաւոր մարդ էր, երեսուն-երեսուն երկու տարեկան. նա կարճահասակ էր, նրբակազմ ու ջրուա կաղմաճքով. բարձր ճակատը, կանխահաս հերազուրկ գլուխը ուժեղ խմացականութեան կնիք ունէին. փոքրիկ խելացի աչքերը՝ ոսկեպատ ակնոցների տակից յարաշարժ, չըգիտես ինչ մի յարատե մտքով էին ալեկոծ: Իր կայտառ, աշխոյժ բնաւորութեան համապատասխան նա անհանգիստ ու պրպտող հոգի ունէր: Գործնական գիտութիւնների լայն պաշարը, բնական մեծ տաղանդը և աշխատանքի անհատնում սէրը նրան դարձրել էին օրինակելի կառավարիչ նաւթահանքների:

Նրա ստեղծագործող միտքը գիշեր-ցերեկ դադար չունէր. վիթխարի ծրագրեր, մէկը միւսից յանդուգն՝ անդադար եռում էին այդ լեռի գանգի տակ, որպէս բոցերը վառ հնոցում: Վաղ առաւօտից մինչև ուշ գիշեր նա գործարանում էր ու անասելի հաճոյք էր զգում մեքենաների շառուչը, շոգեշարժերի որոտը, ճախարակների ճոնչիւնը, անիւների գլխոցը և երկրի դրնդիւնը լսելիս:

Այդ իր տարերքն էր, իր խառնածքը, իր էութիւնը:

Բնութեան ոյժերի խօլական պօէզիան, նրանց ստեղծագործական ու հզօր տենդը, նրա հոգում հնչւում էր, որպէս յաւիտենական երաժշտութիւն, անհուն ու բազմազան հրապոյրներով նրա ողջ էութիւնն էր փոթորկում: Կաթսաների ու խողովակների մէջ սանձաժ շոգու պորթկուսները ու պայթիւնի աւերածները նրա համար գեղեցիկ խենթութեան հմայքն ունէին, որ նա դիմադրաւում էր ժպտալով, ինչպէս վարժ ձիաւորը սիրով շոյում, գոլրգոլրում է իր տակ ծառացող փրփրուն երկվարին:

Սառնաւածքով արի ու շիտակ, գործունէութեան մէջ՝

ճշտապահ ու մանրակրկիտ, որոշումների մէջ խոհական ու հատու, նա նենգել ու խաբել, կեղծել ու կեղծաւորել չըգիտէր: Դէպի ստորագրեալները, դէպի բանւորները խստապահանջ՝ բայց և արդարամիտ էր ու իրաւախոհ. ասում էր վաստակաւորի զրկանքի վրայ հիմնւած դժուճ, տմարդի տնտեսութիւնը և ծագող վէճերին արագութեամբ լուծումն էր տալիս բարեխիղճ կերպով: Նա նման էր հեռաւոր ճամբի այն զգաստ ձիաւորին, որ մի բարձր նպատակ հետապնդելով, թէև մտրակ ունի ձեռքին ու քշում է սրարշաւ, բայց և չի մոռանում սննդել, խնամել իր երկվարը:

«Մարդն էլ մի մեքենայ է. երկուսն էլ պահանջում են որոշ հոգածութիւն, որոշ ուշադրութիւն՝ բեղմնաւոր կերպով արտադրելու համար», ասում էր նա յաճախ ընկերական շրջանում:

Նա խորապէս հաւատացած էր, որ ինքը իր լայն գիտութեամբ, իր աննկուն կամքով, իր անսպառ եռանդով կոչւած է իրագործելու մի բարձր առաքելութիւն, մի աղնիւ նպատակ և աշխատում էր իր առաջ արգելքներ, խափանաւիթ պարագաներ որչափ կարելի է նւաղ տեսնել:

Դեռ ուսանող ժամանակ նա մի տեղ կարդացել էր և արտագրել իր յուշատետրում հետեւեալ տողերը, որպէս իր ապագայ գործունէութեան անյղի, անխախտ հրահանգ.

«Բնութեան ոյժերի հզօր բաղխումից է ծագում կիանքի մեծ, շինարար իմաստութիւնը. նրանց օրէնքների երկաթէ տրամաբանութիւնը կոչւած է յեղաշրջել համայն ընկերական կեանքը. մարդկային հոգարտ ու անընկճելի իմացականութեան առաջ բնութիւնը պիտի բաց անի իր խորախորհուրդ գաղտնիքները, իր խաւար անդունդները, իր անհատնում գանձերը»...

Այնուհետև ռւր էին գնում, ինչ էին դառնում այդ գանձերը, նա այդ մասին բնաւ չէր մտածում և ժամանակ իսկ չունէր դրա համար: Նա գործում էր մի տեսակ տարերային, անգիտակից թափով և երջանիկ էր ու հպարտ, որ կարողանում է դուրս շարտել երկրի հարստութիւնը, որ հեղեղի պէս դուրս էր ժայթքում անդունդներից: Ընկերական կեանքի ցաւագին կնճիռները, որոնց վրայ դարերն էին խոկացել ու լացել, նըրան քիչ էին զբաղեցնում: Բաւական էր, որ մեքենաները որոտում էին, ուժեղ, ջլուտ թիկունքներն ու բազուկները գալարւում էին և երկիրը բաց էր անում իր կուրծքը և դուրս շարտում իր հարստութիւնները:

Եւ բաղդին հաճելի եղաւ, որ նա հանդիպի հանքատէր հարուստ Չարսաստովին, որ նրան ոչնչով չէր խանդարում ու անսահման վստահութիւն էր տածում դէպի նրա փորձառութիւնն ու խելքը:

Իվան Պետրովիչ Չարսաստովը ալիսառն մաղերով, թաւ, ալիսառն բեխերով, լիքը՝ ածիւած երեսով միջահասակ մարդ էր: Նրա խոշոր, անփայլ աչքերը, միշտ յոգնած արտայայտութեամբ՝ յղիացած գոյութիւնների գունատ ու ամուլ բարութիւնն ունէին: Չէր սիրում, որ իրեն անհանգիստ անեն, բաւական էր, որ կառավարիչը հաւատացնէր, թէ գործերը լաւ են զբնում:

Կառավարիչն այդ լաւ դիտէր, այնուամենայնիւ սիրում էր արտակարգ դէպքերում, մեծածախս ձեռնարկների առթիւ նրա խորհրդին դիմել՝ մեծաւորի և ստորադրեալի յարաբերութեան պատշաճաւորութիւնը պահելու համար: Եւ սովորաբար այդ խորհրդակցութիւնները վերջանում էին նրանով, որ Իվան Պետրովիչը, քանի մի ձեւական նկատողութիւններից յետոյ, լիովին համաձայնում էր իր կառավարչի հետ:

— Միայն թէ, Գրիգորիյ Եղնակովիչ, խլապօտ, գլխացաւանք չը լինի, պաժալտատ, ասում էր խաղէյինը վերջում:

«Խլապօտը, գլխացաւանքը», ըստ Իվան Պետրովիչի, գործարանի խռովութիւններն էին, բանւորական դժգոհութիւնները, գործադուլները, ֆիասուածների պահանջները, հարեան կաւածատէրերի հետ դատական կամ այլ վէճերը:

Մասնաւորապէս նա չէր սիրում գործադուլները ու ֆիասուած բանւորներին դրամական հատուցման խնդրը:

— Պէտք չէ երես տալ, Գրիգորիյ Եղնակովիչ, տգէտ մարդը իր պահանջների մէջ միշտ աներես է. մէկ տաս, երկու կ'ուզի, երկու տաս, չորս. պէտք չէ երես տալ, հաւատացէք իմ փորձառութեանը, կրկնում էր նա յաճախ, մինչդեռ ի պատասխան՝ Ալմադեանը մեղմիւ հազում էր:

Ահա այս երկու մարդիկն էին այսօր գրասենեակում խորհրդի նստել քննելու համար մի նոր ձեռնարկի ծրագիր, որ Ալմադեանն էր յղացել:

Կառավարիչը փռել էր սեղանի վրայ նաւթահանքերի ու հողերի մանրամասն կարտը և մեծ մատիտը ձեռքին՝ եռանդով ու հմտակից կերպով բացատրում, հասկացնում էր իր անելիքը:

Չարսաստովին ըստ երևոյթին ուշադրութեամբ լսում էր և նոյնիսկ երբեմն նկատողութիւններ անում:

— Իրաւունք ունիք, Իվան Պետրովիչ, բայց... և կառավարիչը շարունակում էր իր համարձակ տեսութիւնը, իր ուժեղ իմացական հայեացքով ընկճելով իր մեծաւորին:

Արդէն մի ժամից աւել տևում էր խորհրդակցու-

Թիւնը, երբ կառավարիչը նկատեց, որ Իվան Պետրովիչը մեղկօրէն ուրորում է աջ բեխը ու աչքերը թարթում դանդաղութեամբ. դա նշան էր, թէ նա սաստիկ ձանձրացել է:

— Ես այս բոլորիս վերջացնում եմ, Իվան Պետրովիչ, այս բոլորիս:

— Ոչինչ, ոչինչ, շարունակեցէք, ես ձեզ լսում եմ...

Եւ յանկարծ լուսամուտից ներս թափանցեց մի անախորժ, դեղնաւուն լոյս, խաղաց պատերի վրայ ու անցաւ:

Կառավարիչը վար թողեց մատիւտը, նայեց դէպի լուսամուտը.

— Հրդեհ է, ի՞նչ է...

Ու նա ոտքի կանգնեց, շարժեց դէպի լուսամուտը, մինչդեռ խաղէյինը բաց թողեց իր բեխը ու անտարբերութեամբ ասաց.

— Գուցէ...

Դուռը բացեց ու շէմքի վրայ յայտնեց լեզգի պահապանի փափախն ու ետփռնջին:

— Աղա, մեր տարտալշիկ Մուքէլը վառեց:

— Ի՞նչպէս թէ վառեց, հարցրեց կառավարիչը ակնյայտ խռովեալ:

Չարփաստովը վերստին բեխը բռնեց:

— Վառեց, աղա, կրկնեց պահապանը. խոհանոցում շորերը կպան ու վառեց:

— Մեռաւ...

— Հա, աղա, բոլորովին մեռաւ, ասաց միամտօրէն պահապանը, այ, էնտեղ է, ու նա ցոյց տուց լուսամուտի կողմը, յետոյ յետ քաշեց և դուրս գնաց:

Կառավարիչը գունատեց ու մնաց քարացած:

Լուսթիւն տիրեց:

Իվան Պետրովիչը խորհրդակցութիւնը վերջացած

նկատելով՝ ոտքի ելաւ. ու երբ պատրաստուում էր դուրս գնալ, դարձաւ դէպի կառավարիչը.

— Գլախօէ, Գրիգորիյ Եզնակովիչ, նայեցէք, պոժալստա, որ այդ տարտալշիկի պատմութիւնից խաւօտ, գլխացաւանք դուրս չը գայ...

Կառավարիչը լուռ էր ու մտածկոտ. նա նոյնիսկ մոռացաւ ըստ սովորութեան տառջ անցնել, խաղէյինին ճամբայ ձգել, ու նայում էր նրա լայն թիկունքին, հաստ ու ցած ծոծրակին, նայում էր շեշտակի ու յամառ, ասես առաջին անգամ էր տեսնում թէ մէկը և թէ միւսը...

Եւ երբ Չարփաստովը իսպառ ծածկեց ու նրա կառքի ձայնը հեռացաւ, մարեց, նա դուրս եկաւ բակը: Մուքէլի դիակը դեռ ծխրտում էր, ձենձ ու խոնձրահոտ արձակում: Ձէր ուղում նայել, բայց լապտերի լոյսի աղօտ փայլի տակ կռացաւ ու նայեց... մի սև կոճղ, ու մի սև գունդ գլխի փոխարէն ճակնդեղի պէս եփւած. նա նկատեց նաև քաշ ընկած լեզուն, և խոռոչներից դուրս ընկած աչքերը—գոնէ նրան թեաց՝ թէ տեսաւ:

— Վերցրէք ներս տարէք, կարգադրեց նա ցածրաձայն ու ընկճած. ու շտապով վազեց դէպի գրասենեակը:

Դուռը բանալուն պէս՝ քամու մի ուժգին հոսանք խլեց ու վար շարժեց սեղանի վրայ փռւած բաց կարտը. Ալմագեանը չը վերցրեց, ասես նոյնիսկ չը տեսաւ: Գրպանից հանեց ծխատուփը, դուրս քաշեց մի պապիրոս, վառեց, սկսեց ծխել ու քայլել յետ ու առաջ. Կարտը խանդարում էր. նա ոտքի մի ուժեղ հարւածով դէն շարժեց այն դէպի մի անկիւն, ու շարունակեց քայլել յետ առաջ, յետ առաջ... Երբեմն կանգնում էր, ձեռքը ճակատին տանում, կամ անտեղի կերպով ակնոցներն ուղղում ու դարձեալ քայլում:

Մուքէլին լաւ էր ճանաչում: Նրա անուշ ու մի քիչ վեհերոտ դէմքը աչքի տառջն էր. և այժմ... այդ խանձաձ, եփւած մսակոյտը:

«Ջարդւած, աւերւած մեքենան կը նորոգես, կը կարկատես, իսկ եփւած մարդը...», մոմոաց նա կամացուէ:

«Բնութեան ոյժերի հզօր բաղխումից է ծագում կեանքի մեծ, շինարար իմաստութիւնը. նրանց օրէնքները երկաթէ տրամաբանութիւնը...»

Նա յիշեց իր յուշատետրի հրահանգը և չը վերջացրեց, որովհետեւ պարզ ու որոշ կրկին լսեց պահապան լեզու ձայնը.

«Աղն, մեր տարտալըձիկ Մուքէլը վառւեց»...

Յետոյ այդ ծանր ճենճերահոտը, որ բռնել էր ամբողջ սենեակը, նրան թւում էր, թէ իր հետ բերեց սենեակը, շունչը բռնւում էր. լուսամուտը բացեց և լայն կրծքով շունչ առաւ, մնաց կանգնած ու ճակատը հովին աւեց:

Եւ հովը դարձեալ կատաղի էր, փչում էր, փչում...

Յետեւում մեղմ խշրտուկ լսեց. նա ցնցեց ու յետ նայեց դռնատեւած. սենեակում մենակ էր... քամին էր, որ շարժել է կարտը անկիւնում. նա զայրոյթով փակեց լուսամուտը. ու ճակատը ապակուհ յենած, նա յում էր դուրսը, այնտեղ՝ ուր ընկած էր Մուքէլը. երկար նայեց, կրկին սկսեց քայլել սենեակում:

«Միայն թէ՛ խլապօտ չը լինի այդ պատմութիւնից...» յիշեց խաղէյինի վերջին յանձնարարութիւնը:

— Պատմութիւն, կրկնեց նա ինքն իրան ու բարձրաձայն — լաւ պատմութիւն է. ու մի խելագար, պաղ ծիծաղ ծումեց նրա ջլոտ դէմքը. «խլապօտ, պատմութիւն... պատմութիւն, խլապօտ», անդադար հնչում էին նրա ականջին, որպէս հոգեհան, խեղդող յանկերդ.

աշխատում էր մտքից վանել այդ երկու բառը. իզուր, «խլապօտ, պատմութիւն»...

— Գիւտ կարելի է, մոմոաց նա գլուխը ցնցելով. և երբ կարողացաւ վերջապէս խլացնել այդ երկու բառերը, անմիջապէս ինքն իրան շշնջաց.

«Ջարդւած մեքենայ... եփւած մարդը»:

— Տէր Աստուած, բացականչեց նա խռովայոյզ. ու գոհ եղաւ, երբ հեռախօսը հնչեց. նա մօտեցաւ:

— Ո՛վ է խօսում:

— Գրիգորի Նզնակովիչ, ասում էր մի կանացի ձայն, ուշանում էք, երևի մոռացաք:

Տիկին Ջարփաստովան էր. այո՛, Գրիգորի Նզնակովիչը իսպառ մոռացել էր, որ այս երեկոյ նա պիւնիկ ունի...

— Հը՞, գիտէք, տիկին, հաւատացէք, Մարֆա Անդրէնա... գլուխ սաստիկ ցաւում է... ներքեք խնդրեմ... պատմութիւն, խլապ... ֆո՛ւ, սատանան տանի, բացականչեց Ալմադեանը գլուխը յետ քաշելով հեռախօսից:

— Ի՛նչ, ի՛նչ... պատմութիւն:

— Ոչինչ, ճշմարիտ, այդ այնպէս. ես ասում եմ, որ այսօր գլուխս սաստիկ ցաւում է և չեմ կարող գալ, վերջացրեց նա հաստատ ու չոր ձայնով:

— Վատ, վատ Գրիգորի Նզնակովիչ, եղաւ պատասխանը, և հեռախօսը յանկայծ լռեց, ասես զայրոյթով:

Ալմադեանը հեռացաւ, էլի քայլել սկսեց, և էլի՛ պատմութիւն, խլապօտ... ու նորից յիշեց խաղէյինի թիկունքն ու ցածը, տափակ ծոծրակը. և յետոյ՝

«Բնութիւնը բաց է անում իր անհատնում գանձերը... ու ուշքն ընկաւ անկիւնի կարտին. ինչո՞ւ էր նա այնտեղ, չէր յիշում. ինչո՞ւ համար էր պատրաս-

տել, ի՞նչ ծրագրերի համար, նա իսպառ մոռացել էր. վերջերեց յատակից, փռեց սեղանի վրայ ու նայում էր բութ, անմիտ հայեացքով. «պատմութիւն, խլապօտ, պատմութիւն, խլապօտ»... նոյն հոգեմաշ յանկերզը. նա զայրոյթով խլեց կարտը, ջլուտ շարժումով պատառտեց ու ցրել տւեց յատակին:

Հոգեկան տագնապը սակայն դրանով չը թեթևացաւ. մի անորոշ միտք, որ ըմբռնել չէր կարողանում, ճմուռն էր նրա ուղեղը, տրամաբանութիւնը խախտւած էր, ու ի՞նչ մի կերպ չէր կարողանում կատարւած զարհուրելի անցքը կեանքի անհատնում պատճառները ու հետևանքների մէջ դասաւորել, իրերի համակարգութեան մէջ նրա ճիշտ տեղը գտնել. զլխում թերի, անձն ու յեղեղուկ գաղափարների ժխտ էր, և կռիւնքը պատուում էր մի խաւար ու ծանր անհանգստութիւնից: Եւ երբ փորձում էր տրամաբանօրէն մտածել, դասաւորել իրերը, իսկոյն հիւսած մարդը, ապա տափակ ու հաստ ծոծրակը. պատկերները և նրանց հետ այն խենթացնող բառերը՝ «պատմութիւն, խլապօտ» թափով շրջան էին անում և մտքերի վրայ իշխում էր քաօսը: Ու քիչ էր մնում ճշայ անորոշ, բայց անապին ցաւից. ճակատն այրւում էր, ու աչքերը բորբոքած էին:

Եւք էր փնտռում, և չըկար, չըկար...

Ուշ գիշեր էր, երբ գրասենեակի դուռը կամացուկ բացւեց ու շէմքի վրայ յայտնւեց մի գիւղացի երիտասարդ:

Մի վայրկեան նրան թւաց, թէ Մուքէշն է. ճիշտ այդպէս վախվիւնում նա մի օր դուռը բացեց և իրեն մի նամակ մեկնեց:

Խռովայոյդ, գրեթէ վախով նայեց Ալմազեանը ե-

րիտասարդին, որը ընկճւած, աչքերին արցունք, գլուխը քաշ, մնաց կանգնած:

— Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում:

— Աղն, իմ խալէր վառեց... քեռուս տղան... Մուքէշը... ախր հէր ու մէր ունի... բա խաբար տանք... աղա, ախր... նա էլ չը կարողացաւ շարունակել, արցունքը խեղդեց ձայնը. Սեդրակն էր...

— Հա, հա, ինչպէս չէ... ես կը կանչեմ, խսկոյն, խսկոյն կը գրեմ, կը հեռագրեմ... ապա... դու գնա, գնա հանգստացիր... քեռուդ տղան, հը՛մ... հայր ունի, մայր... ի հարկէ, ի հարկէ:

Սեդրակը դուրս գնաց:

Ալմազեանը խորունկ շունչ առաւ. ինչպէս նա չէր մտածել մինչև այժմ. կանչել հօրը և մի այնպիսի դուրմար տալ, որ նրա սե օրը ապահովէ. այս միտքը կայծակի պէս ահօսեց նրա ուղեղը, ու նրան թւաց, թէ գտել է իր հոգին մաշող մութ առեղծւածի, այդ դաժան անհանգստութեան լուծումը: Եւ նա կ'առնի այդ գումարը Զարփաստովից, թէկուզ պէտք լինի դրա համար իր պաշտօնը թողնել:

Եւ այս հանգստացուցիչ մտքով, խիղճը խաղաղւած՝ նա դուրս եկաւ, ու կտրաւ դրսի խաւարի մէջ:

V

Երկու շաբաթ յետոյ՝ նոյն գրասենեակում, մի գեղջուկ ծերունի, վշտից խորտակւած, յենւել էր իր երկար գաւազանին ու կանգնել Ալմազեանի առաջ: Ճերմակ միտքը անխնամ, ալիքարգ գլուխը երերուն, նա մարած աչքերով նայում էր առաջը առանց բան հասկանալու: Նա եկել էր միայն իր գաւալի գերեզմանի հողը համբուրելու, ու չէր հասկանում, թէ ի՞նչ մանի հողը համբուրելու, ու չէր հասկանում, թէ ի՞նչ են ուզում իրենից, ի՞նչ է այս փոքրիկ մարդը, որ ալ-

նոցներին տակից այնպէս մռայլ ու այնպէս շեշտակի նայում է իրան:

—Նստի՛ր, ծերունի, նստի՛ր, ասաց Ալմազեանը:

Ծերունին անուշադիր էր, շշմած, միայն նայում էր առանց թարթելու:

Այդ պահ, ապակու հայեացքը ընկճում էր Ալմազեանին, ու նա զգում էր, թէ ինչպէս կամաց-կամաց կորցնում է դարձեալ հոգեկան հաւասարակշռութիւնը: Նա ասելիք ունէր, որից իր համար շատ բան էր կախած, որ պիտի լուծէր երկու շարաթից ի վեր տևող ներքին անհնարին տաղնապը, մտածում էր և չէր կարողանում իր ուզած կերպով ձևակերպել: Մի քանի անգամ տենդոտ շարժումով բարձրացրեց ու վար ձգեց ակնոցները, ճակատը շփեց, ապա քաշեց առջևի գլորոցը և այնտեղից վերցրեց մի ծալ թղթադրամ:

—Հա, ծերունի... այն դժբաղդը, այն ցաւալի դէպքը, ի հարկէ...—Ալմազեանը ինքն իր վրայ դայրացաւ այդ «ցաւալի» բառի համար.—այսինքն ուզում եմ ասել, անդառնալի է. ի՞նչ արած... Աստծու կամքն էր.—ու կրկին ճակատը խոժոռեց, ինքը Աստծուն չէր հաւատում ու կեղծում էր.—անդառնալի է, ի՞նչ կարող ենք անել... ի հարկէ միթիթարել... Նա էլի բաներ էր ուզում ասել, բայց յանկարծ, ինչպէս երկու հրաշէկ մեխեր, այն անիծւած երկու բառերը ցցեցին ուղեղում՝ «պատմութիւն, խլապօտ, պատմութիւն, խլապօտ»... Նա ցնցեց գլուխը ու յօնքերը կիտեց՝ ասես սաստիկ խայթոցից, ձայնը դողաց ու լռեց:

Գլուխը քաշ ձգեց և առանց նայելու միկնեց դէպի ծերունին թղթադրամի ծալքը. ծերունին նայում էր նոյն խորտակիչ, ունայն հայեացքով, ու ասես ոչ տեսնում էր, ոչ լսում:

—Ա՛յ, այս փողը քեզ համար ճամբու ծախք... քո սե օրւան համար:

Ծերունին դարձեալ լուռ էր ու անշարժ:

Ալմազեանի ձեռքը մնաց օդի մէջ, ապա կամացուկ իջաւ սեղանի վրայ:

Սեղրակը բացատրեց ծերունուն նրա թեւ ցնցելով:

—Ափօ, աղէն փող ա տալիս քեզ... Մուքէլի համար:

Ծերունին այս անգամ մի ոտքից միւսի վրայ շարժեց, նայեց Սեղրակին, Ալմազեանին, շրթունքները դողդողացին, աչքերը թարթեց արագ-արագ:

—Փո՛ղ... Մուքէլիս համար... մրմնջաց նա, հայ հո՛ւ, էրւած ջիգեարիս գի՛նը... Իմ էրւած ջիգեարը կարո՞ւմ ուտի... հողն իմ գլխին, վախ ջիգեարս, ջիգեարս... Եւ չորացած աչքերից արցունքի կաթիլներն ընկան, գլուխը ձեւով միջուկի վրայով: Նա յետ-յետ քաշեց դէպի դուռը...

Ալմազեանը նախ մնաց քարացած ու գունատ. «էրւած ջիգեարը» իր աղէտաւոր անպաճոյճ իմաստով հրաշէկ երկաթի պէս նրա ճակատը խարանեց, և մինչ ծերունին պատրաստում էր դուրս գալ, նա թռաւ տեղից, հասաւ ծերունուն, բռնեց նրա չորացած աչք երկու ափերի մէջ ու դողդողալով, յուզմունքից կուրծքը ալեկոծ, աչքերը վառ, հեծեծաց:

—Լսի՛ր, լսի՛ր, ո՞վ դժբաղդ ծերունի... ես, ես չեմ սպանել որդուդ, ես... ես... մի՛ անիծի՛ր. մի՛ անիծի՛ր ինձ...

Ծերունին էլ չէր լսում. դուռը ցացեց և նա անյայտացաւ. Ալմազեանը նախ շարած մնաց իր տեղում, ապա առաջացաւ ու ուժասպառ խորտակւած ընկաւ աթոռի վրայ. գլուխը ձեռքերի մէջ առաւ. կ'ուզէր լալ, բարձրաձայն հեկեկալ, բայց չէր կարողանում

և աղէտի գիշերւայ մութ, ծանր վիշտը, գիշատիչ թրու-
չունի պէս իր մագիլները նրա ուղեղի մէջ թաղեց,
նրա հոգին ծաւառեց:

Ո՛չ, հինաւորեց անիծւած առեղծւածը, որի վրայ
դարերն էին խոկացել ու լացել, լուծւած չէր...

Եւ դրսում՝ ինչպէս միշտ, հնոցները թափով ու-
րոտում էին, շոգեվար խողովակները հեռւում էին ու
վնչացնում, անիւները շառաչում էին վայրարար, և
համատարած, վիթխարի տնքոցը բարձրանում էր հա-
զար կողմից ու բոլորը միասին ծուխ ու մուրի հետ
թանձրացած՝ ծանր ջախջախիչ բեռով, իջնում էին,
ճնշում էին նրա ուսերը: Իր և այդ տարերային ժխորի
մէջ անդունդ կար բացւած և Ալմագեսնը բաց աչքով
տեսնում էր նրա սև խորքերում եռացող բարկ քըր-
տինքը, արիւնն ու արցունքը, և ամենից բարձր բիւ-
րաւոր մարմիններ, խանձւած, բզկիկ-բզկիկ ծաւառած,
կախկաւած միսերով. ու նրանք բառաչում էին, մոռնա-
չում, հեկեկում ու ոռնում ցաւից...

Բակում թափառում էր վշտից խելագար ծերու-
նին, անցնում էր այն տեղերով, ուր կաթկթել էր զա-
ւակի արիւնը, եղունգներով չանգոտւած է սառած գե-
տինը, հոտոտում, համբուրում էր հողը. և մինչև ուշ
գիշեր լսում էր նրա աղեկտուր ձայնը:

«Աստու կրակը լափեց քեզ, բնաւ... Դր մեղքիս
համար»...



Ա Զ Պ

Ընկերութիւնս խոստացել է իր բաժանորդներին
տալ «Հանրային Մատենադարան»-ի տարեկան 24
պրակ, իւրաքանչիւրը մօտ 96 երեսից բաղկացած.
բայց որովհետեւ դժուար է առհասարակ ճշտիւ պահ-
պանել այդ ծաւալը, միաժամանակ ամեն գրքում տա-
լով մի ամփոփ գրութեամբ, ուստի և պրակներից մի քա-
նիսը կարող են աւելի թւով երեսներ պարունակել և
միւսները պակաս, իսկ միջին հաշւով մենք կտանք
տարեկան այնքան երես, ինչքան որ խոստացել ենք
մեր բաժանորդներին:

Ընդարձակ գրութեամբները կազմելու են մի քանի
պրակ:



ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Այս սեպտեմբերից Թիֆլիսում Ընկերութեանս Խըմ-
բագրական Մասնաժողովի խմբագրութեամբ եւ Ըն-
կերութեանս իրատարակութեամբ լոյս է տեսնում
երկշաբաթեայ հանդէս

„ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ“

Մատենադարանը կրպարունակէ քարգմանական եւ ինք-
նուրոյն գրութեան հետեւեալ ծրագրով.

1. Վէպեր, վէպիկներ, պատմութեան եւ գեղարուես-
տական ուրիշ գրութեան.— 2. Թատերակ. գրութե-
ան.— 3. Երգիծարանական երկեր.— 4. Այլ և այլք.—
5. Յայտարարութիւններ:

Իւրաքանչիւր համար լինելու է ամբողջական գրութեան
և բաղկացած մօտ 96 երեսից Ընկերութեանս հրատա-
րակութիւնների դիրքով: Մինչև 1912 գեկտեմբերի
31-ը լոյս կը տեսնի 12 համար:

Բաժնէկիւնն է

Տարեկան	.	.	.	3 ռ. —
Վեց ամսեայ	.	.	.	1 ռ. 80 կ.
Ամսական	.	.	.	— 30 կ.
Արտաս. Տարեկան	.	.	.	12 ֆր.—

Այն բաժանորդները, որոնք կը ցանկան միաժամանակ
լինել և Ընկերութեանս անդամ, վճարում են 3 ռուբլի,
որի փոխարէն բացի «Հանրային Մատենադարանից»,
ստանում են 1 ռ. 20 կ. գրքեր Ընկերութեանս հրա-
տարակութիւններից:

Բաժանորդ գրուել կարելի է Թիֆլիսում՝ Ընկերու-
թեանս գրասենեակում, Бебутовская, 25 և բոլոր հայ
գրավաճառանոցներում: Գաւառներում՝ Ընկերութեանս
տեղական ճիւղերի, աշխատակից-անդամների և տեղա-
կան գրավաճառների մօտ:

Պատասխանատու խմբագիր Լ. ԵՈՒՆ Բաքայեան